Փանոսը որքա՜ն հարուստ պատրաստութիւններ ունէր իր հիւրերի համար, որոնք նրա տնից միշտ անպակաս էին լինում: Ես ոչ մի վանեցու տանը եւրոպական կարասիք չտեսայ, իսկ այստեղ կար մի գրասեղան եւ մի քանի աթոռներ, թէեւ նրանց վրայ չէին նստում:

Սենեակի լուսամուտների առջեւ կար պատշգամբի նման մի բան, հովանաւորուած տանձի ու ծիրանի ծառերով: Խաղողի որթը ներքեւից վեր էր բարձրացել եւ, փաթաթելով պատշգամբի սիւներին, տալիս էր նրան կանաչազարդ հովանոցի կերպարանք: Սենեակում օդը բաւական հեղձուցիչ էր: Ես, Ասլանին միայնակ թողնելով, դուրս եկայ պատշգամբի վրայ: Սկսեցի նայել դէպի այգին: Ծառերը ընկղմուած էին գիշերային մթութեան մէջ. ոչ մի տերեւ չէր շարժւում: Ամէն ինչ լուռ էր, միայն անհանգիստ ճպուռը իմ մերձակայքում եղանակում էր իր միակերպ, տաղտկալի երգը:

Ներքեւում, բակի մէջ, կրակ էր վառւում: Վարպետի համարեա բոլոր ընտանիքը պտտւում էր կրակի շուրջը: Այնտեղ, ամառնային օջախի վրայ, մեզ համար կերակուր էին պատրաստում: Ամառը այգեստանցին եփում է, ուտում է եւ պառկում է բաց օդի ներքոյ: Ես տեսնում էի, թէ ինչպէս տափակ կտուրների վրայ նստած էին հարեւանները եւ ընթրիք էին վայելում: Նրանց սեղանը լուսաւորուած էր մի տեսակ արեւելեան օտարոտի լամպայով, որը շինուած էր փայտից եւ բարձր վանդակի ձեւ ունէր, եւ որի մէջ թռչունի փոխարէն՝ վառւում էր մի ճրագ: Վանդակի վրայ հագցրած էին բարակ կտաւից սպիտակ շապիկ, որ պահպանում էր ճրագը քամու հոսանքից:

Սովորութիւնները համարեա միեւնոյնն էին, ինչ որ տեսել էի մեր կողմերում: Ընթրիք էին անում կտուրների վրայ. սեղանների շուրջը բոլորել էին միայն տղամարդիկ, իսկ կանայք ոտքի վրայ սպասաւորում էին, սպասելով, որ տղամարդիկ վերջացնեն, յետոյ իրանք եւս մի բան ուտեն: Աղջիկները նոյն կտուրների վրայ անկողիններ էին պատրաստում, իսկ մայրերը ճօճում էին անքուն զաւակների օրօրոցները: Ա՜խ, որքա՜ն քաղցր էր կտուրային այդ բացօթեայ կեանքը... որքա՜ն անմոռանալի յիշատակներով կապած էր նա իմ սրտի հետ... Դէպի բարձր նայում ես, քեզ հովանաւորում է պարզ, աստղազարդ երկինքը, իսկ քո շուրջը տիրում է անսահման, ազատ տարածութիւն, խնկարկուած հազարաւոր բուսականների անուշահոտութեամբ:

Մի քանի կտուրներից երգի ձայն էր լսւում, երգում էին ըստ մեծի մասին հոգեւոր երգեր: Աշխարհիկ երգեր շատ չունի այդ ժողովուրդը, եւ ինչ էլ որ ունի, խիստ տխուր են եւ մելամաղձոտ: Դա ամենապարզ յատկանիշն է յուսահատ ինքնուրացութեան, երբ մարդու միտքը, հոգին, բաւականութիւն չգտնելով աշխարհային վայելչութիւնների մէջ եւ զուրկ լինելով նրա ուրա-